ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

TECHSERVICE LLC-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Հիգիենիկ պարագաների փաթեթն իր մեջ ներառում է հետևյալ հիգիենիկ պարագաները. 1. Օճառ՝ ձեռքի, ոչ պակաս 80 գրամ կշռով, լինի մեկ կամ երկու կտորով՝ կլոր ձևով, մրգային կամ ծաղկային բուրմունքով: Թղթե կամ պոլիէթիլենային փաթեթավորմամբ, որի վրա պարտադիր նշված լինի անվանումը, քաշը, պահպանման ժամկետը և ՀՀ օրեսդրությամբ սահմանված այլ անհրաժեշտ տվյալներ: Մատակարարման պահին պիտանելիության մնացորդային ժամկետը 50%-ից ոչ պակաս: Որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս՝ 74 գ, սոդայանյութերի զանգվածային (վերահաշվարկված ըստ Na2O) մասը ոչ ավելի՝ 0,22 %, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ (36-41) °C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի: 2. Լոգաքնի գել՝ ոչ պակաս 30 մլ ծավալով, պետք է լինի պոլիէթիլենային կամ պլաստիկ սրվակով՝ 1 կամ 2 սրվակով: Մարմնի գելը իրենից ներկայացնում է հեղուկ միջոց մարմնի լվացման համար, գելային տեքստուրայով, որը ջրի հետ շփվելիս վերածվում է փարթամ ու փափուկ փրփուրի: Պետք է պարունակի ջուր, գլիցերին, բնական հավելումներով, թեթև նուրբ հյուսվածքով, մրգային կամ ծաղկային բուրմունքով, հակաբակտերիալ, որը պետք է ապահովի մաշկի նուրբ մաքրում: Սրվակի վրա պարտադիր նշված լինի անվանումը, քաշը, պահպանման ժամկետը և ՀՀ օրեսդրությամբ սահմանված այլ անհրաժեշտ տվյալներ: Մատակարարման պահին պիտանելիության մնացորդային ժամկետը 50%-ից ոչ պակաս: 3. Շամպուն՝ ոչ պակաս 30 մլ ծավալով, պետք է լինի պոլիէթիլենային կամ պլաստիկ սրվակով՝ 1 կամ 2 սրվակով: Շամպունն իրենից ներկայացնում է մածուցիկ զանգված մազերի խնամքի համար, բոլոր տեսակի մազերի համար,

	որը պարունակում է սինթետիկ մակերևույթաակտիվ նյութեր, օգտակար հավելանյութեր, հոտավորիչ մրգային կամ ծաղկային բուրմունքով, հակաբակտերիալ: Պետք է պարունակի ջուր, նատրիումի լաուրետ սուլֆատ, որը ջրի հետ շփվելիս վերածվում է փարթամ ու փափուկ փրփուրի: Սրվակի վրա պարտադիր նշված լինի անվանումը, քաշը, պահպանման ժամկետը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ անհրաժեշտ տվյալներ: Մատակարարման պահին պիտանելիության մնացորդային ժամկետը 50%-ից ոչ պակաս: 4. Մեկանգամյա օգտագործման երկսայրանի ածելի, 1 հատ: Ածելի երկսայր էրգոնոմիկ կիսով չափ ռետինեպատ բռնակով, սափրող մասի սայրերը չժանգոտվող բարձրակարգ պողպատից, քրոմապատ, պաշտպանիչ թափանցիկ կափարիչով: 5. Սափրվելու մածուկ՝ ոչ պակաս 10 մլ ծավալով, պետք է լինի պոլիէթիլենային կամ պլաստիկ սրվակով՝ 1 հատ: Սափրվելու մածուկը մաշկի հետ շփման ընթացքում պետք է առաջացնի փրփուր, և ապահովի թաց սափրվելու հնարավորություն, պետք է պաշտպանի և խնամի սափրվելու ընթացքում զգայուն և գրգռված մաշկը: Սրվակի վրա պարտադիր նշված լինի անվանումը, քաշը, պահպանման ժամկետը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ անհրաժեշտ տվյալներ: Մատակարարման պահին պիտանելիության մնացորդային ժամկետը 50%-ից ոչ պակաս: 6.Ատամի մածուկ՝ ոչ պակաս 15 մլ ծավալով, լինի մեկ կամ երկու պլաստիկ սրվակով: Ատամի մածուկը նախատեսված է ատամների և բերանի խոռոչի խնամքի համար, ատամի մածուկի արտաքին տեսքը և թանձրությունը՝ ատամի խոզանակի մակերեսին մնացող համասեռ զանգված, հոտը, գույնը և համը տվյալ անվանման մածուկին հատուկ գույնի, հոտի և համի, մանրէներ չպետք է լինեն, ջրածնական ցուցիչը (pH)՝ 5,5-10,5, ատամի մածուկը թունաբանորեն և կլինիկապես պետք է լինի անվտանգ: Սրվակի վրա պարտադիր նշված լինի անվանումը, քաշը, պահպանման ժամկետը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ անհրաժեշտ տվյալներ: Մատակարարման պահին պիտանելիության մնացորդային ժամկետը 50%-ից ոչ պակաս: 7.Զուգարանի թուղթ, 1հատ: Զուգարանի թուղթը երկշերտ, 100% ցելուլոզա, թղթի լայնությունը ոչ պակաս 9,8 սմ, թղթի ռուլոնի երկարությունը ոչ պակաս 22,5 մետր՝ բաղկացած է իրար միացված թերթիկներից, քաշը՝ ոչ պակաս 75 գր.: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»: Բոլոր հիգիենիկ պարագաների անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված «N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոնների և նորմերի: Վերը նշված բոլոր հիգիենիկ պարագաները պետք է տեղադրված լինեն մեկ փաթեթում՝ համապատասխան zip փականով և բռնիչով: Փաթեթը պատրաստված լինի համապատասխան չափսի կոշտ թափանցիկ պոլիէթիլենից, փաթեթի վրա նշված լինի փաթեթում առկա ապրանքների անվանումները և

	քանակները: Փաթեթները պետք է դասավորված լինեն ստվարաթղթե արկղում, արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի փաթեթների քանակը, մատակարարող կազմակերպության անվանումը, մատակարարման ամիսը և տարեթիվը: Հիգիենիկ պարագաների փաթեթի տեսքը տես կից ներկայացված նկար 1-ում: Հիգիենիկ պարագաների փաթեթի նմուշը հաստատելուց հետո Վաճառողին կտրամադրվի ճշտված բաշխումը՝ տոկոսների փոխարեն քանակներով: Հիգիենիկ պարագաների փաթեթների մատակարարումների իրականացման մոտավոր քանակները և հասցեները տես՝ Հավելված 1–ում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

TECHSERVICE LLC в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	